ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱԶԻՆ

«ԱՄԱՐԱՍ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆԻՑ
(ք.Երևան, Զորափի 70/1)

No: 9-0922-1
18.10.2022թ.

ԲՈՂՈՔ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ
Մ.Խ.Վարդանյանի վարութային ակտի վերաբերյալ

1. ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«ԱՄԱՐԱՍ» փորձագիտական կենտրոն հասարակական կազմակերպությունը 2022 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազին հանցագործության մասին հաղորդում էր ներկայացրել հայտնելով.

1) Որ 2022 թվականի սեպտեմբերի 15-ին MediaHub.am լրատվական կայքի լրագրող Անի Գևորգյանին ԱԺ շենքից ֆիզիկական ուժի գործադրմամբ հեռացնելով՝ նրան արգելվել է ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, լուսաբանել ԱԺ գործունեությունը: Այդ կերպ Ալեն Սիմոնյանն օգտագործելով ԱԺ նախագահի կարգավիճակը, իրենից իշխանական լծակներով կախվածության մեջ գտնվող անձանց՝ ՊՊԾ ծառայողներին, դրդել է խոչընդոտել լրագրող Անի Գևորգյանի մասնագիտական օրինական գործունեությանը, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-237-րդ հոդվածներով նախատեսված հանցավոր արարք, որն էլ անձամբ կատարել են ՊՊԾ ծառայողները:

2) Որ նույն օրը ՀՀ ԱԺ պատգամավոր Քրիստինե Պողոսյանը, մեկ այլ դրվագում, փորձում է սեղանին դրված առարկայով հարված հասցնել լրագրող Անի Գևորգյանին, որն ավարտին չի հասցնում անկախ իր կամքից, քանի որ մեկ այլ պատգամավոր, որն այդ պահին կանգնած էր Քրիստինե Պողոսյանի կողքին, բռնում է ձեռքից: Տեսանյութի ուսումնասիրությունը վկայում է, որ պատգամավոր Քրիստինե Պողոսյանը նպատակ ուներ դիտավորությամբ Անի Գևորգյանին պատճառել մարմնական կամ առողջության այլ վնասվածք, որն ավարտին չի հասել անկախ Քրիստինե Պողոսյանի կամքից:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Մ.Խ.Վարդանյանը 2022 թվականի հոկտեմբերի 4-ին գրավոր տեղեկացրել է Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարին «ԱՄԱՐԱՍ» փորձագիտական կենտրոն հասարակական կազմակերպության կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հանցագործության մասին հաղորդման առնչությամբ քրեական վարույթ չնախաձեռնելու մասին:

4) 2022 թվականի հոկտեմբերի 5-ին հսկող դատախազ Ա.Բեգլարյանի կողմից հաստատվել է քրեական վարույթ չնախաձեռնելու մասին քննիչի վարութային ակտի օրինականությունը:

5) «ԱՄԱՐԱՍ» փորձագիտական կենտրոն հասարակական կազմակերպությունը վարույթ չնախաձեռնելու մասին էլեկտրոնային փոստի միջոցով

տեղեկացվել է 2022 թվականի հոկտեմբերի 11-ին, որի վերաբերյալ ապացույցը կցվում է սույն բողոքին:

ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

• Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է՝ «Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ»: Այսինքն, սահմանադիրն այդպիսով, ի թիվս այլնի, նպատակ ունի ապահովել մինչդատական վարույթի պատշաճությունը, համակողմանիությունը և քննության անաչառությունը, որի ապահովման հիմնական երաշխավոր է սահմանել դատախազական հսկողությունը:

Գտնում ենք, որ քննիչը թույլ է տվել դատավարական հետևյալ կոպիտ սխալները, որի «օրինականությունն» էլ հաստատել է հսկող դատախազը.

Այսպես, հանցագործության մասին մեր հաղորդմամբ հայտնել էինք, որ 2022 թվականի սեպտեմբերի 15-ին MediaHub.am լրատվական կայքի լրագրող Անի Գևորգյանը, հավատարմագրված լինելով ՀՀ Ազգային ժողովի գործունեությունը լուսաբանելու համար և հաշվի առնելով, որ նույն օրն Ազգային ժողովում կայանալու է հերթական նիստը, իր մասնագիտական գործունեությունը կատարելու նպատակով բազմաթիվ այլ լրագրողների հետ այցելել է ՀՀ Ազգային ժողովի վարչական շենք (ք.Երևան, Բաղրամյան 19): Խորհրդարանի միջանցքներում հանդիպելով տարբեր պատգամավորների՝ լրագրող Անի Գևորգյանը նրանց հետ ունեցել է հարցազրույցներ: Այդպիսով լրագրող Անի Գևորգյանը, ինչպես մյուս օրերին, այդպես էլ այդ օրը, երբ գտնվել է Ազգային ժողովի վարչական շենքում, իրականացրել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեություն: Լրագրողն ինքնուրույն է ընտրում այն ժամանակահատվածը, որի ընթացքում ցանկանում է մնալ խորհրդարանի շենքում և կատարել իր աշխատանքը: Այդպիսի աշխատանքը, մասնավորապես, իրականացվում է տարբեր պատգամավորների և կառավարության անդամների հետ հարցազրույցներ վարելով և խորհրդարանի նիստերին հետևելու և դրանց վերաբերյալ հրապարակման ենթակա լրատվական նյութեր պատրաստելու եղանակով: Այսինքն, Անի Գևորգյանը, հարցեր տալով որևէ պատգամավորի՝ չէր կարող իրականացնել ապօրինի գործունեություն, այն էլ՝ Ազգային ժողովի բնականոն գործունեությունը և քվեարկությունը տապալելը: Ավելին, որևէ նիստ չի տապալվել, քանի որ նույնիսկ փաստական հանգամանքներում նկարագրված դեպքի ընթացքում Ազգային ժողովի նիստը եղել է բնականոն ընթացքի մեջ: Իսկ ՍԴ դատավորի քվեարկությունը, հենց այդ ժամանակ շարունակվել է, որևէ վայրկյան չի դադարել և ավարտվել է, արդյունքները հրապարակվել են: Ուստի, հիմնազուրկ են պնդումները, թե լրագրող Անի Գևորգյանը տապալել է ԱԺ նիստը կամ քվեարկությունը: Հիմնազուրկ է նաև պնդումը, թե ԱԺ նախագահն իրավունք ուներ այդպիսի հիմքով լրագրողներին ԱԺ շենքից հեռացնելու հրաման տար: Ուստի՝ լրագրողին ԱԺ շենքից ֆիզիկական ուժի գործադրմամբ հեռացնելով՝ նրան արգելվել է ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, լուսաբանել ԱԺ գործունեությունը: **Այդ կերպ, մեր համոզմամբ, Ալեն Սիմոնյանն օգտագործելով ԱԺ նախագահի կարգավիճակը, իրենից իշխանական լծակներով**

կախվածության մեջ գտնվող անձանց՝ ՊՊԾ ծառայողներին, դրդել է խոչընդոտել լրագրող Անի Գևորգյանի մասնագիտական օրինական գործունեությանը, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-237-րդ հոդվածներով նախատեսված հանցավոր արարք, որն էլ անձամբ կատարել են ՊՊԾ ծառայողները:

Այս առնչությամբ քննիչը քրեական վարույթ չնախաձեռնելու համար մեր կողմից ներկայացված փաստական տվյալները փորձել է հերքել և առանց քրեական վարույթ նախաձեռնելու իրականացրել է այնպիսի գործողություններ, որոնց համար քրեական վարույթի մեկնարկը հանդիսանում է պարտադիր պայման: Մասնավորապես, քննիչը իրավական գնահատական է տվել մեր կողմից ներկայացված փաստերին, դրա համար կատարել է «հետազոտություններ» և եկել եզրահանգման, թե իբր ՀՀ ԱԺ նախագահի գործողությունները եղել են օրինական, իսկ լրագրողինը՝ ապօրինի: Մինչդեռ, նման հետևության հանգելու համար անհրաժեշտ է, որպեսզի կատարվի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, որն էլ առանց քրեական վարույթ նախաձեռնելու անհնարին է, քանի որ այդպիսի հետևության հանգելու համար անհաժեշտ է կատարել բազմաթիվ քննչական և ապացուցողական գործողություններ[1]:

Օրինակ՝ գնահատելու համար, թե արդյոք ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գործողությունները եղել են օրինական, առնվազն անհաժեշտ է հարցաքննել հենց Ալեն Սիմոնյանին, աշխատակազմի ղեկավարին, որին հանձնարարվում է լրագրողին հեռացնել ԱԺ շենքից, ՊՊԾ ծառայողներին, որոնք բազմաթիվ դրվագներով ֆիզիկական ուժ են գործադրում լրագրողի նկատմամբ, լրագրողին, ով հայտարարում է, որ ինքը չի լքելու խորհրդարանի շենքը, մինչև իրեն չներկայացվի այն իրավական ակտը (որոշում կամ կարգադրություն), որն ընդունվել է իր նկատմամբ:

Ավելին, քննիչն ուսումնասիրելով ՀՀ ԱԺ նախագահի 12.02.2019թ-ի թիվ ՆՈ-01-Լ որոշման հավելվածի 7.7-րդ կետը հանգել է համոզման, թե իբր Ալեն Սիմոնյանի և ՊՊԾ աշխատակիցների գործողությունները եղել են, ոչ ավել և ոչ պակաս՝ **բացարձակ** իրավաչափ, այնինչ՝ նման հետևության հանգելու համար առնվազն անհրաժեշտ էր, որպեսզի իրավական անհրաժեշտ ընթացակարգերով, մասնավորապես քրեական վարույթի շրջանակներում, քրեադատավարական ընթացակարգերին համապատասխան, ստուգելով՝ հաստատել կամ հերքել լրագրող Անի Գևորգյանի կողմից ԱԺ նախագահի հիշյալ որոշման հավելվածի 7.7-րդ կետով նախատեսված հակահիրավական արարքը, որն էլ հնարավորություն կստեղծեր գնահատելու, թե արդյոք լրագրողի գործողությունները եղել են հակաօրինական: Ակնհայտ է, որ քննիչն ունենալով ավելի լայն լիազորություններ, պետք է, և պարտավոր էր կատարել օբյեկտիվ քննություն, որն էլ հնարավորը կլիներ միայն քրեական վարույթ նախաձեռնելուց հետո: Ուստի, առանց բավարար և անհրաժեշտ գործառույթների կիրառմամբ ներկայացված հետևության հանգելը հստակ վկայում է, որ քննիչը ոչ թե նպատակ է ունեցել կատարելու օրենսդրությամբ իր վրա դրված՝ օբյեկտիվ և բազմակողմանի քննություն կատարելու պարտականությունը, այլ՝ ստանձնելով

[1] Տե՛ս ուղարկված պատասխանի 2-րդ էջի վերջի 4 տողերը: Քննիչը նույնպես նշել է, որ անհրաժեշտ է պարզել մի շարք հանգամանքներ: Հետո անհասկանալի ընթացակարգերով շատ արագ պարզել է:

«պաշտպանի» գործառույթ՝ փորձել է ամեն կերպ աղարացնել Ալեն Սիմոնյանի գործողությունները:

Ավելին, քննիչը առանց վարույթ նախաձեռնելու, չգիտես ինչպես, պարզել է, որ Ա.Գևորգյանի աղմկելու պատճառով խանգարվել է ԱԺ բնականոն աշխատանքը, իսկ լրագրողի գործողությունները օրինական չեն:

Այսինքն, քննիչը այս փուլում պարտավոր էր ընդամենը նախաձեռներ քրեական վարույթ, քանի որ՝

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն առերևույթ հանցանքի մասին իրավաբանական անձից ստացված պատշաճ հաղորդման հիման վրա քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել:

Այս առումով առանձնահատուկ ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքին, որ նոր քրեական դատավարության օրենսգրքով քրեական վարույթի նախաձեռնումը լուրջ ձևափոխությունների ենթարկված և սկզբունքորեն նոր իմաստավորում ստացած ինստիտուտներից մեկն է: Այն էապես տարբերվում է նախկին օրենսգրքով նախատեսված քրեական գործ հարուցելու կամ ինչպես ընդունված էր ասել՝ նյութերի նախապատրաստման փուլից: Նշված ձևափոխումների հիմնական նպատակներից է, որպեսզի իրավասու մարմինն իր խնդիրները լուծելու համար պետք է ունենա արդյունավետ կառուցակարգեր, այլ ոչ թե կիսատ կամ ոչ լիարժեք գործիքներ (ինչպիսին էին, մասնավորապես, սահմանափակ քննչական գործողությունները կամ սեղմ ժամկետները): Քրեական դատավարության օրենսգրքի նոր իրավակարգավորումների հիմքում օրենսդրի կողմից դրված գաղափարախոսությունը կայանում է նրանում, որ քննիչի կողմից քրեական վարույթ նախաձեռնելը պետք է լինի կանոն, իսկ չնախաձեռնելը՝ բացառություն: Սրանով նաև երաշխավորվում է նախաքննության մարմնի կողմից ամբողջական քննություն կատարելու հնարավորությունը, որի պարագայում վարույթ իրականացնող մարմինն օբյեկտիվ պատկեր է ստանում արարքում հանցագործության առկայության կամ բացակայության մասին: Ավելի պարզ ասած, քրեական դատավարության նախորդ կարգավորումներով նախատեսված քրեական գործի «հարուցման փուլ»-ի առանձնահատկությունները ներառվում են նոր կարգավորումներով նոր իմաստ ստացած նախաքննության մեջ: Սրանից հետևում է, որ ենթադրյալ հանցանքի առկայության նույնիսկ փոքր հավանականության դեպքում քրեական վարույթ նախաձեռնելը և հետագայում այն իրավաչափորեն կարճելը չի կարող դիտարկվել որպես բացասական երևույթ, առավել ևս՝ համարվել վարույթի հանրային մասնակցին կշտամբելու հիմք կամ առիթ, քանզի առերևույթ հանցանքների վերաբերյալ ողջամիտ հաղորդումներին արագ և արդյունավետ արձագանքելը պետության առաջնային պարտականություններից մեկն է: Այսինքն, օրենդիրը նոր կարգավորումներով նախաքննության մարմնի համար նախատեսել է լիարժեք գործիքակազմ, որը պետք է նպաստի ողջամիտ ժամկետներում ամբողջական և լիարժեք քննություն:

Այսպիսով, կարելի է պնդել, որ քրեական գործի հարուցումը՝ որպես քրեական դատավարության փուլ կամ մինչդատական վարույթի ենթափուլ պարզեցվել է, դարձել է նախաքննություն սկսելու նախապայման և դրա անբաժանելի մաս, ինչով էլ

կանխորոշվել են դրան փոխարինած ինստիտուտի կարգավորման առանձնահատկությունները:

Հատկանշական է, որ նոր կարգավորումներով քննիչի կողմից այլևս չի կայացվում քրեական գործ հարուցելու մասին որոշում: Դա պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ նոր կարգավորումների քննարկվող մասի գաղափարախոսության հիմքում դրվել է ոչ թե որևէ հանգամանք ստուգելու իրավասություն, այլ ընդամենը հանցագործության մասին առերևույթ վկայող տվյալների առթիվ քրեական վարույթի նախաձեռնում: Ստանալով հանցագործության մասին հաղորդումը քննիչը հաղորդման մեջ նշված որևէ հանգամանք կամ պնդում չի ստուգում, նա փաստական առումով չի էլ կարող հիմնավորել դրա հետ համաձայնվելու իր հետևությունները: Այլ կերպ ասած՝ արձանագրություն կազմելով քննիչը միայն փաստում է, որ առկա են որոշակի հանցանքի առերևույթ հատկանիշներ, ինչը լիովին բավարար է նախաքննությունը մեկնարկելու համար:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդված 1-ին մասը սահմանում է քրեական վարույթ չնախաձեռնելու կանոնները, որի համաձայն՝ այն դեպքում, երբ հաղորդումը չի համապատասխանում սույն օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ[2] և 3-րդ մասերով նախատեսված պայմաններին, քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմում, որի վերաբերյալ հաղորդումն ստանալու պահից 24 ժամվա ընթացքում գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին՝ նշելով քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքը: Վերլուծելով նշված կարգավորումը հանգում ենք հիմնավոր հետևության, որ օրենսդիրը քրեական գործ չնախաձեռնելու հնարավորությունը (կամ իրավունքը) սահմանել է որպես բացառիկ պայման, այն էլ՝ հիմնականում դա պայմանավորելով տեխնիկական խոչընդոտներով: Այսինքն, քրեական վարույթ չնախաձեռնելը կարող է գրանցվել հետևյալ դեպքերում.
- հանցագործության մասին հաղորդման մեջ նշված չէ որեւէ կոնկրետ դեպք, գործողություն կամ անգործություն, որը կարող է ենթադրաբար հանցավոր լինել,
- հաղորդման մեջ նշված է որոշակի դեպք, գործողություն կամ անգործություն, որին ակնհայտորեն չի կարող տրվել քրեական օրենսգրքով նախատեսված որեւէ արարքի:

Մյուս կողմից, քրեական վարույթ նախաձեռնելու օգտին է խոսում **<u>ողջամտորեն</u>** (ոչ թե անկասկած) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու՝ օրենսդրի սահմանած հնարավորությունը:

Սա նշանակում է, որ որոշակի պարզման ենթակա հանգամանքներից կախված՝ հնարավոր է նկարագրված արարքին տալ իրավական գնահատական: Մեր դեպքում քննիչի կողմից արձանագրվածն արդեն բավարար է, որպեսզի **ողջամտության շեմը համարվի հաղթահարված:** Մասնավորապես, քննիչն արձանագրում է, որ լրագրողի

[2] Համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, **որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:**

գործողություններն անօրինական են, հետևաբար նկարագրվածին իրավաբանական գնահատական տրվել չի կարող: **Միևնույն ժամանակ սա նշանակում է, որ եթե լրագրողի գործողություններն օրինական են, ապա կարող է նկարագրված արարքի ողջամտորեն տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու իրավական գնահատական:**

Քննիչը ինքն է նշել, որ պարզման ենթակա մի շարք հանգամանքներ կան, դրանք են՝

1. Արդյոք լրագրողը գործել է իր լիազորությունների շրջանակներում
2. Տվյալ պահին արդյոք կատարել է մասնագիտական գործունեություն [3]

Սա կրկին նշանակում է, որ այս հարցադրումների պարզված պատասխանից է կախված լինելու հնարավոր է իրավական գնահատական տալ թե ոչ:

Հետևաբար հենց սրանով արդեն քննիչը փաստել է, որ հաղորդումը համապատասխանում է <<առերևույթ հանցանքի մասին>> համարվելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին:

Հետևաբար, արդեն օրենքի ուժով պարտավոր էր նախաձեռնել վարույթ և պարզել:

Գտնում ենք, որ մեր կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումից պարզ է դառնում, որ նշվել են շատ կոնկրետ արարքներ, շատ կոնկրետ գործողություններ, այն էլ՝ կատարված ուղղակի դիտավորությամբ[4] և ամբողջությամբ բավարարվել է հիմնավոր ենթադրությունը կամ կասկածը, որ տեղի է ունեցել հանցագործություն:

Ինչպես արդեն վերևում նշվեց քննիչն այս փուլում չէր կարող իրականացնել քննություն կամ ստուգումներ, չէր կարող հավաքել ապացույցներ կամ այլ տվյալներ, որոնց գնահատումը հնարավորություն կստեղծեր հերքելու հանցագործության բացակայության հանգամանքը: Ակնհայտ է, որ օբյեկտիվ դիտորդի մոտ ստեղծվում է հիմնավոր կարծիք, որ հաղորդմամբ նկարագրված դրվագներում առերևույթ կատարվել են հանցագործություններ: Քննիչը փորձ է արել առանց իրական հնարավորության՝ հերքել հանցագործության փաստը, ավելին՝ քննիչի կանխակալ դիրքորոշումն այնքան է արմատավորվել, որ չի էլ նկատել, թե ինչպես է անցել այս փուլի համար նախատեսված, ընդամենը՝ «հանցանքն առկա է, թե բացակայում է» հարցին պատասխանելու շրջանակներից, որ սկսել է դեռևս գոյություն չունեցող մեղադրանքից հանիրավի պաշտպանել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին և պատգամավոր Քրիստինե Պողոսյանին: Ի դեպ, հարկ ենք համարում հիշեցնել, որ այդպիսի լիազորությամբ օժտված է միայն դատախազը, այն էլ դեռևս միայն նախաքննության փուլում:

ՀՀ ԱԺ պատգամավոր Քրիստինե Պողոսյանի վերաբերյալ դրվագի մասով.

---

[3] Տե՛ս ուղարկված պատասխանի 2-րդ էջի վերջի 4 տողերը:

[4] Հաշվի առնելով հակահիրավականությունը գիտակցելու կանխավարկածը:

Քննիչը «վերլուծելով» մեր կողմից նեկայացված հանցագործության մասին հաղորդումը հանգել է հետևության, որ ՀՀ ԱԺ պատգամավոր Քրիստինե Պողոսյանի դրվագում հանցագործության հատկանիշները բացակայում են: Իր հետևությունները հիմնավորելու համար քննիչը վերլուծության է ենթակել ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքը միայն ավարտված լինելու շրջանակներում, մինչդեռ մենք հաղորդմամբ հստակ հայտնել էինք, որ Քրիստինե Պողոսյանի դրվագում առկա է անկախ սուբյեկտի կամքից ավարտին չհասած հանցագործություն, այսինքն՝ հանցափորձ: Ուստի, քննիչի վերլուծությունը, թե քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված արարքի առկայության համար անհաժեշտ է դատաբժշկական եզրակացություն՝ դուրս է իրավաբանական տրամաբանությունից: Միաժամանակ մենք հստակորեն մատնանշել էինք, որ Քրիստինե Պողոսյանի արարքում, գտնում ենք, որ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կարգավորման հանգամանքը, այն է՝ «Եթե անձը նախատեսել է մեկից ավելի հանցավոր հետևանքներից որևէ մեկի առաջացման հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել, թե որ հետևանքը կառաջանա, ապա արարքը որակվում է ըստ փաստացի առաջացած հետևանքի: *Եթե որևէ հետևանք չի առաջանում, ապա արարքը որակվում է որպես դիտավորության մեջ ընդգրկված, տվյալ իրադրությունում հնարավոր ամենաթեթև հանցագործության փորձ*»: Ուսումնասիրելով պատգամավոր Քրիստինե Պողոսյանի հետ կապված դրվագի տեսնյութերը հստակորեն արձանագվում է Անի Գևորգյանին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելու դիտավորություն, որը, ինչպես նշել ենք, արտահայտվում է հետևյալում «ՀՀ ԱԺ պատգամավոր Քրիստինե Պողոսյանը փորձում է սեղանին դրված առարկայով հարված հասցնել լրագրող Անի Գևորգյանին, որն ավարտին չի հասցնում անկախ իր կամքից, քանի որ մեկ այլ պատգամավոր, որն այդ պահին կանգնած էր Քրիստինե Պողոսյանի կողքին, բռնում է ձեռքից»: Այս հանգամանքը չնկատելը կամ հերքելը, մեր գնահատմամբ, նույնպես կանխակալ դիրքորոշման հետևանք է, որն ուղղված է առերևույթ հանցագործության հանգամանքն ամեն գնով հերքելուն:

Քննչը նաև հայտնել է, թե իբր «ԱՄԱՐԱՍ» փորձագիտական կենտրոն հասարակական կազմակերպությունը հանցագործության մասին հաղորդում ներկայացնելիս չի նշել կազմակերպության հասցեն և առնչությունը հանցագործությանը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-դ հոդվածի 2-րդ մասով: Հայտնում ենք, որ քննիչի այս պնդումը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ինչպես «էլեկտրոնային հարցումների միասնական համակարգ (www.e-request.am) -ում, ինչով էլ ուղարկվել է հանցագործության մասին հաղորդումը, այնպես էլ մեր կազմակերպության ձևաթղթում նշված է կազմակերպության հասցեն: Հաղորդման 5-րդ էջի նախավերջին պարբերությունում էլ հստակ նշված է հետևյալը՝ «...Միաժամանակ, ելնելով նույն օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասից հայտնում ենք, որ նկարագրված առերևույթ հանցագործության հետ մեր առնչությունը պայմանավորված է լրագրողների իրավունքների պաշտպանությամբ,...»: Այս փաստերը չտեսնելը, հավանաբար,

պայմանավորված է համակարգչային տեխնիկայից օգտվելու քննիչի թույլ հմտություններով:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասը, 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 12-րդ կետերը, 299-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 300-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով նույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասը,

Խնդրում ենք

Որպես վերադաս դատախազ հանձնարարել հսկող դատախազին կամ օգտվելով մինչդատական վարույթում հսկող դատախազի լիազորություններից՝ անհապաղ հանձնարարել քննիչին նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն:

ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ